

առաջին համոզվելու, թե զուգարթը փոխադրվել է նոր տուն:

Դուրսվածը հարգվում էր ընտանիքի բոլոր անդամներից, առավելապես՝ տան ծերունիներից:

Կուղրաթը: Կուղրաթը տանու, հին, անտեսա-
հելի բարեկամ ողին էր: Կուղրաթը պատկերաց-
վում էր կանացի կերպարանքով: Երիտասարդ,
հեղուկ խոնարհ հարս կամ ջանասեր ու ամոթխած
սղիկ էր նա. սր ապրում էր կամ թոնրան
սկսած մեջ, կամ ուղլուրի ամբարի ետեր, կամ
մթերանայի որեկ տնկյունում:

Կուղրաթը տնտեսանելի կատարում էր տան-
տիկիների աշխատանքի դժվարին մասը. պտու-
ղանում սըրսոցի մանուկներին՝ եթե տանը ոչ ոք
չէր լինում:

Բարեխորա տանտիկիները հող թխելիս կուղ-
րաթին սրտես բաժին, մի փոքրիկ կտտի կտոր
էին պնդում թոնրան ախան մեջ: Կուղրաթը ոչինչ
չէր ուտում, միայն բավարարվում էր այդ կտտից
հա՛ս բաշխով:

Կուղրաթին սիրում է նրա կատարած աշխո-

տանքի համար օրհնում էին աան տարեց տան-
տիկիները: Կուղրաթը կանացի հարգված անձն-
անուններից էր:

Թաղա ճաց ու մատաղ: Թաղա հաց էին
խոստանում ասածուն՝ որեկ զօվարին վիճակի
մեջ ընկնելիս կամ ծանր հիվանդության դեպքում
հիմեցյալ անհաաի հիվանդության ժամանակ կամ
որեկ նպատակի հասնելու աղերսանքով և այլն:

Մայրամուտին շաղախում էին խոստացված
բանակի ալուրը, կեսգիշերին սկսում էին թխել
հացն ու դեռ լուսաւաղը դուրս չեկած, տների
երդիկներից ցած էին պցում երկուսից-երեք լու-
վաշ, նաւր կանչելով՝ «Այսինչ (տանտիրոջ
անունն էին աւրիս), արթնացեք, այսինչի «թա-
ւա խացն իսւ Աստուած ընթունելի անի: — պա-
տախանում էր տանտերը:

Նույնն էր և մատաղը: Միայն թե մատաղը
Իփվում էր ցերեկը, միսր մսաջրի հետ տմանով
էր բաժանվում: Մատաղ, թե թաղա հաց կանուղ
անձն ինրր չէր հաշուում ոչ մեկից և ոչ էլ հյու-
րասիրում բարեկամներին:

Ժ Ո Վ Ո Վ Ր Պ Ո Կ Ո Ն Տ Ո Ն Ե Մ

Կապույտ: Կապույտը կամ նոր տարին շատ
աննշան ու անշուր տուն էր: Բոլոր տներում էլ
այդ սրբ ստվարականից շատ էին տպանձ տնում
ու մեջն էլ շամիչ, ընկալիկ և կաղինի միջուկ
խառնում, ապա՝ իրար հանդիպելիս մեկն ասում
էր՝ «բյու կաղանի շնախալսր բլնի», մյուսը
պատասխանում էր՝ «բյունն էլ շնախալսր բլնի»,
հմեն տարի պարով էս օրվան խառնենք: Եվ
զրոնով էլ վերջանում էր նոր տարվա սմբողջ
նշանակալիսթյունը:

Պրատիկ գրատիկ: Հունվարի հինգի երեկոյան
գրատիկ խրումն էր: Դեռ նախընթաց օրվանից
կանայր շնայած պատ էին պահում, բայց պատ-
բառաում էին պողպարն ու բաղցրը Լվացր էին
տնում, մեծ ու փոքր յոզանում էին և հինգի
տոալտայան, սըշալուլի հետ, չուրարանչուր
տանտիկին իր ընտանիքի հարս ու աղջիկների
վերցրած, պնում էր եկեղեցի:

Եկեղեցի էին շտապում թե՛ տարեց ու ծեր
սղամարդիկ, թե՛ հավատով լեցուն ու թերահա-
վատ երիտասարդներ ու մանկահասակներ:
Մամառացության տվարտին զգեստավորված պա-
տարաղիչ բահանան նստում էր բեմի առաջ.
մտունում էին նրան, ինչպես միշտ, ալտուղ հո
նախ՝ այն սղամարդիկ (ծերերը), որոնք սրոշն

էին հաղորդություն առնելու երանք մի բանի բողի
մեկում էին բահանայի առաջ, ստանում իրենց
մեղրերին թողություն ու դուրս գալիս: Մանուկ-
ների, երիտասարդ-աղջիկների և առհասարակ
բոլոր կանանց համար էլ պարտադիր էր տարվա
մեջ երկու անգամ, այն է՝ փոքր և մեծ պատիկ-
նիկին, հաղորդություն առնելը, և բոլորը լցվում
էին բեմ, մի բանի բողի ծունկի պալիս, մի բանի
տեղամ բահանայի հետ կրկնում՝ «ողորմիա
մեղավորիս», և արդեն խոստովանած տուն վերա-
դառնում:

Սոմ բերանով, մայրամուտից առաջ, նորից
ժողովուրդը դնում էր եկեղեցի, լսում պատարաղ,
հետո հաղորդություն առնում: Մինչև հիշալ արա-
բողությունների ավարտը արեամուտ էր լինում,
ու ժողովուրդը նստում էր խիստի լիառաւտ սե-
ղուն:

Խիստի որն սրգելված էր որեկ մեկըն
կերակուր:

Խիստի սեղանին, ըստ սովորության, լինում
էր զոշաբով ու ալյուրով եփված հաշ, ոշտալով
ու ձավարով խառը փլավ ու գյուղական ջրուր:

Նրր խթումն արած-պրծած էին լինում, 12—
14 տարեկան տղաները, խմբերի բաժանված,
պնում էին «Ավետիս» երգելու հսւմր-խսւմր ել-

նում էին երթիններն ու գլուխները վար կախած
երգում էին.

Այսօր տոն է ծննդյան, ավետի՛ս,
Աշխար լցվավ լիություն, ավետի՛ս,
Մեր Տեբն էլավ նախատակ, ավետի՛ս,
Տոողքն էլավ տուռ խորտակ, տվետի՛ս:

Ապտ եղանակը փոխում էին.

Մարիամն կնաց տունն հերին, ալելույա՛,
Մնավ, պիրեց Հիսուս որթին, ալելույա՛,
Քյրիստոս որդի կյրկանոցին, ալելույա՛,
Քյավոր՝ Սիմոն ծերն արիցին, ալելույա՛:

Հետո երգինները հարցնում էին.— Մեր լաճու
տնուն ի՞նչ ի՛:

Տանտերերը աալիս էին տան ամենափոքրիկ
ողայի անունը, ասենք՝ Սիմոն: Ավետիս ավոգ-
ները սկսում էին երգել Աիմոնի գովքը:

Սիմոնի ճուճ ճրթացավ, ալելույա՛,
Քյանգյ բարդի ծառ հերկնցավ, ալելույա,
Խեր կերավ խառտացավ, ալելույա,
Մեր կերավ զվարթացավ, ալելույա,
Քյոր կերավ, խորոակրցավ, ալելույա,
Սիպեր կերավ, հայլորացավ, ալելույա,
Մամիկ կերավ, ջրհեղացավ, տլելույա,
Պապիկ կերավ, անմախացավ, ալելույա,
Խորքուր կերավ, գյումրախացավ, ալելույա,
Խորոխպեր կերավ, գանգրնացավ, ալե-
լույա,
Քեռաղեն կերավ, առողճացավ, տլելույա,
Քեռմամեն կերավ, բախտավորցավ ալե-
լույա,
Մորքուր կերավ, ինգավ թոներ, կոտն իրի-
ցավ, ալելույա՛,
Քյանիմ կերան, չպստկցավ, ալելույա՛,
չղսակցավ, ալելույա՛:

Նվ ավետիս երգողները մի քանի անգամ
կրկնում էին վերջին տողը:

Տանտիկինը երգող երեխաներին յուզ, ձու
կամ ձավար էր ընծայում ու մինչ նա մոռանից
կվերադառնար, երեխաներից մեկը կաուրից իջ-
նում էր ներքև՝ ընծան ստանալու, իսկ մյուսները
զվարթաձայն երգում էին.

Մամի՛կ, մամի՛կ, մո՛ղ արա,
Քյասեն պոպոլեպ արա՛...

Խթումի երեկոն մխիթարանքի օր էր այն
ընտանիքների համար, որոնց տներում մեծ դատ-
կից այս կողմ մահացուկյան դեպք էր պատահել:
Տարեց տղամարդիկ ու ասարեց կանայք գնում էին
մխիթարանքի խոսք ասելու:

Միմյանց ասում էին.

— Քյրիստոս ծնավ և հայտնեցավ, ծեղ ու
մեկ մեծ ավետիս:

— Օրինյալ ի սուրփ ծնունդ Քյրիստոսի,—
պատասխանում էր ավետիս սաացողը:

Այս գարձվածքը հունվարի հինգի երեկոյից
մինչև հունվարի վեցի երեկոյան փոխանակում
էին բոլոր միմյանց հանգիպողները:

Հունվարի վեցի արշալույսին նորից ամբողջ
հասարակությունը գնում էր եկեղեցի: Առավոտից
սկսում էին խմբերով միմյանց տուն գնալ, դա-
տիկը շնորհավորել: Քահանաները ևս շրջում էին՝
յուրաքանչյուրն իր ծխի տունն օրհնելու:

Պատիկ դատիկը ձմեռնամուտի առաջին ու-
րախ ու համաժողովրդական տոնն էր:

Սրբի Սաղկյիս: Պատիկ դատիկից հետո, սուրբ
Սարգսի պասը, առաջին շաբաթապահն էր: Սուրբ
Սարգսին կանայք ու աղջիկները բացի պասը,
ծոմ էլ էին պահում:

Սուրբ Սարգսի շաբաթ օրվա ևրպին մեծ
նշանակություն էին տալիս հաակապես չամուս-
նացածները: Սյգ գիշերվա երազը համարվում էր
բախաագուշակ: Ամբողջ տարվա ընթացքում
միայն սուրբ Ասարգսի պասի ուրբաթ օրն էին
կտավատի փոխինգ պատրաստում՝ ցորենն ու
էտավատը առանձին-առանձին բովում էին ու
միասին լցնում սանգի մեջ, ծեծելով մանրաց-
նում և ուտում: Իսկ աղապ աղջիկներն երեկոյան
ուտում էին աղի ըլիթ և առանց ջուր խմելու քնում,
որպեսզի ծարավեն ու քնի մեջ իրենց ուրիշը
ջուր տա: Սուրբ Սարգսի այգ օրվա երազը պետք
է անպայման պասովելու: Շաա խանգավառներ
այդ ծոմը պահում էին ռիինգ օր մեյ գանովա,
այսինքն՝ առաջին երկուշարթի օրվանից ոչինչ
չէին ուտում մինչև շորեքշարթի ճաշին մի անգամ
ուտում էին ու մնում ծոմ՝ մինչև ուրբաթ երեկո:

Տեղաուաճ (Տեառն ընդաուաջ): Տենդառաճի
օրը նշանված աղջիկների սկեսուրներն այցի էին
գնում իրենց հարսնացուներին և խնամոնց տանը
նստում մինչև տենգառաճ վառելու:

Արևը մտնելուն պես կաուրներին գիղում էին
չոր եղեգ ու կյաղ, և յուրաքանչյուր ընտանիք
բարձրանում էր իր աան կտուրը: Կտուր էին
հանում նաև հարսնացուին ու սկսում խարույկ
վառել: Խարույկը վառում էին ոչ թե իրենց տան

յուրդկով, այլ եկեղեցուց ընդված վառ մոմով: Պարաագիր չէր, որ առեն ոք վառ մոմ հասցնել իր կառուրու: Կարելի էր և սնկր մյուսից կրակ վերցնել, պալմանով, որ առաջինը լինելը եկեղեցուց ընթած կրակից վառված:

կրր խարույկի բոցը սկսում էր մեղմանալ, շուրջը թողորածները խարույկի վրայից թռչում էին: Ենարույկի մոխիրը բոռ-բոռ ցած էին թափում ուսն, մատանների, դոմերի ու փայտանների երզիկներից:

Այդ օրվա հրազները վառում էին եկեղեցու
շույսերից:

Պատկերնդանք (Քարեկենդան): Սուրբ Սարգսից հետո սկսում էր լարեկենդանի երկու շաբաթը: Պարեկենդանը իրոք որ մարդկանց սրտերում կուսակված ուրախության պոռթկում էր ամենուրեք կերուխում, երգ ու պար: Պարեկենդանքին էին լինում հարսանիքների մեծ մասը, նշանգրեքները: Պարեկենդանի առաջին հինգշաբթին էր լինում ճորքի օրը: Այդ օրն աղգական ու հարեան ողջիկներն ու աղջնակները հավաքվում էին նարահարո կամ նշանված աղջիկ ունեցողներին անելու, երգիկից կախում էին երկօղակ հասա տալուն: Սղջիկներից ամեն մեկը նստում էր մի օղակի մեջ ու ոտքերը երկարացնում դիմացինի նստած պակին, իսկ ձեռքերով բռնում իր նստած տալանը: Նրկու հողի կանդնած ճորքը նստածներին եանը, համաշալախուն հրում էին նրանց թոնրաաան մի պաաից մյուսը: Օղի մեջ ուղղնորեն տալարերվելով, սկսում էին սիրային ուրախ տաղեր սսել: Աղջիկներին ու հարսներին ղույղերն անընգհատ փափոխվում էին, մինչև հերթը հասնում էր նորահարսին կամ նշանված աղջկան:

Ճշգրտելով ռաբոկենդանի ուրախություններին
միայն մեկն էր՝ Պարկենդանի վերջին օրերին
արդեն, աղսները ոչ թե ուսանձին աներում էին
դոնդալար խողովում, այլ հարադատ աղա-աղջիկ
խմբովին հավաքվում էին միատեղ դոնդալարի,
վախենիսիսի երգելով երգիծական սուղերու Տվյալ
ընամանիքի տարեցներն էլ, կենտրոնում նստած,
«թամաշա» էին անում:

Ընդունված էր և խաղ՛ խաղալ, որին այն-
 ւղես ընդունակ էին դյուդի զվարճասեր երիտա-
 սարդները: Նրանք վարդեսուրենն ծղտվում էին
 մազ վաճասող մթրոնների, Միջագետքի թափառիկ
 կովարար բրդուհիների, հայատյաց կիսախելադար
 մոլլանների կամ հեռու դավառների հայերի ղե-
 բում ու ուրախացնում շրջապատին: Լուսաղեմին
 ցրվում էին տները և սկսում վայելել իրենց
 ունեցած ուաիր օրվա ամենաընտիր ուսելիքները:

ԶԷ՝ որ բարեկենդանին հետևելու էր հիսնօրյա մեծ պահքը:

Ահա Լրիտասարգության կողմից ներկայաց-
վող խաղերից մի նմուշ, Այն հառկա մի հայ
գուրդի ընտանեկան ծաղրանկարն է:

Տախ ախշկան տաբան իրկան
կամ՝ Կակո-Մակոն նշնվեց:

Բակում կանգնած, վատ հագնված, տղեկ ու
 պառաված աղջիկը ծիծաղելի անհամբերությամբ
 նշաններով ինչ-որ եկվորի է սպասում: Ջենտա-
 փայտին հենված ծերուկը, պատանի, բայց հիմու-
 րավուն որդուն հրում է ղեղի տան կտուրը, որ
 ուշադիր հետևի, և եթե որևէ օտարական երիտա-
 սարգ ղյուղ մտնի, լատանին հարգանքով նրան
 առաջնորդի իրենց աուն:

Շուտով հայտնվում է և օտարականի Պա-
ռանին երգով ընդառաջում է, երգի հետ նա
զանազան ծամածոություններ է անում.

Պյարով էկավ մեր փեսեն,
Մեյ ռոտ կառո՛ւ ի, մեյն հերկեն,
Ակրնչկրններ մեյ գյաղ են,
Գյավր շլվսոր ճրգճրդուկ,
Խելթից ասես ինճրդուկ:

Աղբիւր վաղում է փեսացուն ընգառաջ, փեսացուն սարսափահար դէն է հրում նրան, աղա դաւնում զեղի ժողովուրդն ու երգում.

Առևտրի շառի անհրաժեշտությունը
 Նա խափան չէմ ուր քյուրուրդ,
 Քյուրթի առաճն ի փոփոխոյ,
 Մասն-եղբայրներն են սղոյ,
 Իրեն՝ բարոնած փոթրի ուն,
 Մասնը ճրճան՝ կյաջի սեղոյ

Հնդկնդական առաջ էր շարժվում ձեռնադիպ-
ածին հենված ծերուկն ու երգում.

Նս կտորբան եմ իմ փետին,
Ինչ անուշ էր ծեր կրտսեն,
Ընկ մեկու բոլ պատմիցիք,
Ըտեք չողեն զընթացեր:

Առաջ էր վաղում աղչեա կուպիկ, տառաւ
մայրու Սա ես պարեկով ու երգելով.

Օլորուկ խսիր յատի տեմ,
նստեք՝ կուրրան ծե դադեն,
Աուփրեն պյաջի գավաթի,
Մաթրաթ հիւն չոր-քյառթու

կյարե խացեր, թան թըթու,
կիրենք-խմենք, կըշտացենք,
թոնք տտնիս փշտացենք:

Աղջիկն առաջ էր բերում կոտրած ամանի կըտորով կուլաջուր՝ չոր աթաբի չտորտանքներով լիքը: Եթե փեսացուն ճարակորեն դուրս չպրծներ, ապա մյուսները նրա դուխր կխոթեին կուլաջուրի տեղ:

Ի գնդ, կանացի ըրողը դերերը խաղեցնում կատարում էին միայն տղամարդիկ:

Ճռչ պաղա (Մեծ պաղա): Բարեկենդանի կիրտ-կի օրվան անմիջապես հաջորդում էր մեծ պասի երկուշարթի օրը: Այդ օրը տանտիկիները մի մեծ գուլի սոխի վրա շուրջանակի խրում էին հավի լոթ փետուր, որպես մեծ պահքի յոթ շարաթների խորհրդանիշ: Փետրաղարդ սոխը կախում էին թոնրատտն երգիկից ու անցած ամեն շարաթ օրվա մայրամուտին մի փետուր պոկում ու թոնրում վառում: Իսկ վերջին շարաթ երեկոյան վեր էին առնում սոխն ու դրանով էլ եփում խըթման օրվա ջրաբուր (յուղով չաշ): Երգիկից կախված փետրաղարդ սոխը կոշվում էր ակլալուկ: Երբեմն ծծկեր մտնուկներին վախեցնում էին ակլատիղով:

Մեծ պահքի առաջին օրը ասան ըրողը կերակրում ենք կամ եռացնում, կամ եռման ըրուկտջրով մի քանի անգամ լվանում էին: Այդ լվացումը կոշվում էր ամանները պասից հանել: Մեծ պահքի առաջին երեք օրերը կանայք համարում էին կիրակի: Այսպես, առաջին օրը՝ մկան կիրակի, երկրորդ օրը՝ կաաաղած շան կիրակի, երրորդ օրը՝ կաթակի (կեծակի) կիրակի: Հիշյալ երեք օրերը եկեղեցուց էր բխում, սակայն կանայք այդ կիրակիները նշում էին ոչ մի ձեռագործ չանելով (ըրուդ գդել, գուլալ հյուսել ե այլն), որպեսզի տատված մարդկանց պահպանի կայծակից, կատաղած շնից, ինչպես և հեղուկ ուտելիքով լի ամանները հեռու պահի մուկ ընկնելու վտանգից:

Միհիմ (միջիմ): Այդ օրը աստիկիները թխում էին մի մեծ ձեթով բաղարձ, որը կոշվում էր միհիմալիթ, քանի որ այդ օրը մեծ պահքի քանահինգերորդ օրն էր: Միհիմալիթի մեջ թխելուց առաջ գրված էր լինում 1—5 դուռուշ արժույթյամբ արժաթե դրամ: Երեկոյան միհիմալիթը բաժանում էին այնքան մասի, որքան տվյալ ընտանիքի անդամների թիվն էր: Տան տնդամներից, ուրի բաժնի միջից որ հայանվում էր տվյալ արժաթե դրամը, նշանակում էր, որ

տան գուլաթը (հարստության ունի) նրա դիխին էր: Միհիմալիթից դուրս եկած արժաթե գրամը գտնողին էր մնում:

Նույն միհիմալիթի մեջ գրված էր լինում մի այլ փոքրիկ իր (կոճակ, հուլունք և այլն), որը խորհրդանշում էր խելք: Այդ իրը ևս իր բաժնում հայանտերողին էր մնում: Սակայն «խելք» այնպիսի ցնծություն չէր առաջացնում, ինչպես «գուլաթը»:

Նշանված աղջիկներին այդ օրը կեսարանց տնից, նորահարսներին՝ հերանց տնից ուղարկվում էր երկու մաղ ձեթով բաղարձ կամ ոսպով թխված «կուտապ» կոշվող կարկանդակ, հետն էլ որևէ նվեր կամ հնգական դուռուշ արժեթագրամ: Նվեր տանողը, լինել տան պատանին, թե վարձու հոտաղը, պարգև էր ստանում մի դուլդ գուլպա կամ դրամ:

Ավետի: Ավետի տոնը նշվում էր երկու անխախտ սովորույթով: Առաջինը՝ արևածագից առաջ ընտանիքի ամուրի անդամը, լինել հասուն, երիտասարդ, թե պատանի, պետք է դաշտ հասած լինել և ձնից դեռ չմաքրված իրենց աշարանելուն (ցորենի կտնալ արտին) ավետիս տար, ասելով՝ «Աշխարհին լուս տալու իկող թո քե էլ լիութեն աա»: Երկրորդ՝ երեկոյան աստիկին, ձեռքն առած թոնիր խառնելու անթրոց կոշվող երկար փայտը, դրա մրոտ ծայրը խաչաձև քսում էր ասան չորս անկյուններին, կրկնելով՝ «Պուպուշիկ, տո՛ւ, պուպուշիկ, այո՛ւ, Իսուս Քրիստոսի անունով, պուպուշիկ, այո՛ւ»: Տանտիկինը խաչակնքելով, թոնրատնից մտնում էր մառաններն ու մթերանոցը: Հավատում էին, որ ասան անկյուններում թաքնված պուլուշ-մուպուշ (դանդախ-փոքրիկ) սաաանայաճաբը տներից հավածված, ձեռքերը գլխներին դրած, մեծ խումր կաղմած, լացուկոծով փախչում են դեպի ոտտանայարնակ Գյաղնի ձորը:

Մաղաբաբ (Մաղկաբաբ): Մեծ պահքի մեջ ընկնող այս վերջին կիրակի օրը եկեղեցու փակ խորանի առաջ օրհնում էին բախշաներից բերված և ըրողները դեռ չաված ուտենու ճյուղերը: Փահանան օրհնած ճյուղերը բաժանում էր ժամավորներին: Կանայք այդ ճյուղերից մի-մի հաս խրում էին իրենց խնոցիների պարաններին, իսկ տղամարդիկ, հատկապես պատանիները, տանում էին անկում ծառաստաններում: Այդ օրվա օրհնած ճյուղը, եթե կաշում էր, առանձին ուրախություն էր պատճառում ոչ միայն ծառ տնկողին, այլև ամբողջ ընտանիքին: Այդ օրը նորահարսներին ասանում էին առաջին դարձի:

Հոգի գառնիկ: Եւ զգառնիկ, աշխիւն՝ հարու-
թյան տունը, որպէս հաղորդութիւն առնելու համ-
ընդհանուր օր, իր կանոններով համարյա նույնն
էր, ինչ պատկէ գառնիկը (շալաթ առավոտ եկե-
ղեցի դնալ՝ «հաղորդվել» կիրակի առավոտյան
պատարագին ներկա լինելու) Սակայն, այդ սմե-
նից տուաք, մեծ պատի վերջին ուրբաթ օրը, որին
Լիկեղեցական լեզվով կոչուի են «Չարշարանաց
ուրբաթ», իսկ ժողովուրդն ուղղակի անվանում
էր խոյն ուրապար, շատ էր տարրերովում հունվարի
չորսի ուրբաթ օրվանից:

Արեւակի գառնիկում ընդունված շէր հեռու
անցերում մահացող իրենց հարապատենքի ու
բարեկամների թաղմանը անսլոյման ներկա դա-
նայելու սովորութիւնը Բաղումին ներկա լինելուն
փոխարինում էր ուրապար դնալու պարականութե-
թյունը: Ուրբաթ էին պնում, սուրբ իաշի տոնից
հետո մահացածներին, որոնց մահից հետո մե-
ռկայց առն շէր եղելու Մեծ պատի վերջին ուր-
բաթը համարվում էր աւարիտ մեջ մեռելոց տո-
ների տաղին տյցելության օրը: Մեծ դատկին
նախորդող այդ ուրբաթ օրը պնում էին ննջեցյալ
հարազատի գերեզմանը՝ տաղին անդամ օրհնե-
լուն ներկա դնելովու, նաեւ նրա հարազատներին
ղլուխ ւաւորչլու, աշխիւն՝ միաթարական խոսք
առնելու: Տանում էին՝ աան դեկավարին մի բիր-
մանի շալ կամ այլ նվեր (յուրաքանչյուրն ըսա
իր կարողության), մի գլուխ շաքար, կանանց՝
մի-մի յաղմա, հեան էլ բաղարջ, քաղցր (հալվա)
և մսապիտուկէս 50—100 ձու, իսկ բարեկեցիկ-
ները, բաղարջն ու քաղցրը փոխարինում էին ոչ-
խաբի խորտոգլույով:

Ամբողջ մեծ պատի ընթացքում հավաքած
հավկիթները ուրբաթ օրը սոխի կեւակով ներկում
էին, և շուրթի օրն առաւոտից պատանիները
սկսում էին ձու խաղալ: Աղջիկները ծոմ բերանով
մոտակա արտերից նորածիլ բանջար էին բոցում՝
երեկոյան յոգով-ձովով տաղակելու համար, իսկ
սամիրը (կաթով եփված կորկոսաւաշ) պարտա-
գիր կերակուր էր մեծ գառնիկ խթումի օրը:

Նորահարսների ու նշանված աղջիկների
կեսարանց աներից նրանց համար զատիլ Լիկե-
րեւում մաղով բաղարջ, քաղցր, կարմիր ձու և
որեւէ դարդեղեն կամ դրամական նվեր (դրամ
ստացողն իր համար որեւէ դարդ պետք է դնէր):

Շարաթ մայրամուտին երգիկից ցած էին
բերում մեծ պատի տաղին օրը կախված, յոթ
փեռներով պսակված մեծ պատի յոթ շա-
լաթը խորհրդանշող ոսխը, որից ամեն շարաթ երե-

կոյան մի-մի փետուր էին պոկել և այդ օրը
մնացել էր վերջին փետուրը: Այդ սոխով տան-
տիկինները եփում էին խթումի երեկոյան ջրուրը:

Տան աղջիկներն դրաղվում էին ձու նախնե-
լով: Սոխի կեւակով ներկված ձվերին ստանձում
էին նորածիլ կանաչի աւրեններ, յորացնում.
հետո մի քանի ժամ դցում թթու թանի մեջ. ապա
դրուշությամը ձուն մաքրում ստանձած կանաչ-
ներից: Այդ մասերում կարմիր նախադարձ
տերեւների դաջվածք էր մնացած լինում. իսկ
շուրջը՝ թթու թանից սպիտակած: Ստացվում էր
տերեւադարձ ձու:

Միմյանց գառնիկը հետեյալ խոսքերով էին
շնորհավորում.

—Քյրիսառս հարյավ ի մեռելոց, ծեղ ու մեղ
սեւ ավեախս—ասում էր առաջինը:

—Օրխնյալ է հարություն Քյրիսառսի, հա-
վիսյան,— պատասխանում էր երկրորդը:

Հաջորդ օրը նոր առում էին՝ «Քյու դառիկ
շնախավոր բլնի, հմեն պարի պարով խասներ
էսր օրին, տսպած անփորձանք պախի» և այլ
նման մաղթանքներ, իսկ դիմացինը պատասխա-
նում էր.

—Քյու դառիկն էլ շնախավոր բլնի. տյու էլ
պարով հմեն տարի էսօրին խասնես, տսպած ուր
պարի իրես քիւ շանց սա... և այլն:

Հաւորաւորում: Տոնի նախօրեի մայրամուտին,
յուրաքանչյուր ընաանիքից մի մանկահասակ
աղջիկ, հին փարչն առած, անծղատուն շրջում էր
բաղմաղրյուր մարդադեանում, յոթ աղբյուրից
յոթ կուց ջուր, յոթ քար էր լցնում փարչը, բերա-
նով յոթ անգամ էլ կանաչ էր պոկում ու դցում
փարչի մեջ, հետո վերադառնում էր, փարչը դնում
կաւորը մի հարմար տեղ, որ աղաները չիմանա-
լին, իջնում էր ցած, մտնում առն, նսր խոսում:

Ասաղբոր երեւալիս, մեծահասակները թզով
չափում էին որեւէ կանաչ ու նշան դնում: Առա-
ւելոյան, արեղուկը չծաղած, նրանք նորից էին
չափում կանաչը, եթէ դիշերվա ընթացքում եր-
կարել էր, ապա այն անձը, որի անունով կանաչը
չափված էր, բախաւալուր էր, եթէ չէր երկարել՝
դժբախտ:

Տանախկինները, արեւը դեռ չծաղած, ցած
էին բերում կաւորում պահված յոթն աղբյուրի
ջրով լի փարչը: Ջրի մի մասը լցնում էին հարվող
խնոցու մեջ, մյուսը խառնում ջրին, խմեցնում
կաթնաառ անասուններին, մի մասն էլ թույնում
փարչում: Ի մի խմրված աղապ աղջիկները փար-
չում մնացած ջուրն ու քարերը դաւարկում էին
անկանթ ու նեղարեւան կապն սեռիկի մեջ, ավե-

լացնելով նաև մանր իրեր (հոլովունք, կոճակ, մատանի), որպես բախտանշան իրենց ու իրենց հարազատների համար, նախօրոք որոշելով, թե որ իրն ում անվամբ է: Հետո արդեն դրտնակը մտցնում էին սեռիկի մեջ, այնպես որ մեծ մասը դուրսը մնալը, դրտնակի ու սեռիկի բերանի միջի մնացած բաց տեղը խցկում էին շորի կտորներով և այնպես ամրացնում, որ ջուրը դուրս չթափվեր: Գրանակի վերեի մասին զլխիկի ու դեմքի տեսք էին տալիս, պատրաստում մի շքեղազարդ հարսիկ, կրծքին ու զլխին տեղադրելով իրենց ընտանիքում եղած հին արծաթե զարդերը: Վիճակը պատրաստ էր:

Սկսվում էր վիճակը ձեռքերով թոցնելն ու երգով դովելը:

Ինչպես բոլոր տոն օրերին, Համբարձմանը ևս արձակցիները ղնում էին Ասպարածին: Համբարձման օրը, վերջին սնդամ ձու էր ներկվում և սուսիքներ էին փռվում ծառերի հովանու աակ: Մոտ տասը տեղից լսվում էին աղջկական ղիլ ձայնով երգվող վիճակի խաղիկները: Տաղի յուրաքանչյուր տողին հաջորդում էր՝ «Ջա՛ն վիճակ, ջա՛ն ծաղիկ, ջանե-ջան»-ը, իսկ յուրաքանչյուր երեք տողից մեկը «տղապ լաճերի» հասցեին ուղղված վերալորական խոսք էր լինում:

Ինչպես առհասարակ ժողովրդական շատ երգեր, վիճակի երգը ես անսկիզբ ու անվախճան էր: Երգում էին աղջիկները, ձեռքերին վեր-վեր թոցնելով վիճակը: Ու վիճակի շարժումից արծաթե ռազմաթիվ ու բազմապիսի զարդերն իրար էին գիպչում, թափահալվում էին սեռիկի միջի քարերն ու մանր իրերը ու այս ամենից նվաղանման հաճելի ձայն էր ստացվում:

Ահա աղապ աղջիկների վիճակի ղո՛ւքը:

—Վիճակ նստե վեր իշուն, ջան վիճակ, ջան ծաղիկ.
ջանե-ջան,
Իտե, առճև աորըշում, ջան վիճակ, ջան ծաղիկ,
ջանե-ջան:

Աղապ լաճեր վիճկին շուն, ջան վիճակ, ջան ծաղիկ, ջանե-ջան:
Վիճա՛կ, սանյաթըտ գյուլբան, ջան վիճակ,
ջան ծաղիկ, ջանե-ջան,
Խալավտ ատլաս ոսկեպյան, ջան վիճակ, ջան
ծաղիկ, ջանե-ջան...

Աղապ լաճեր քյե կուրրան, ջան վիճակ, ջան
ծաղիկ, ջանե-ջան.

Վիճա՛կ, անունըա նիդյար, ջան վիճակ....

Աչկով տնելն ի քյու քյար, ջան վիճակ...

Աղապ լաճեր քյե նոքյար, ջան վիճակ...

Ես վիճակ շեմ, լալդուղ եմ, ջան վիճակ...

Պարակ մեճացս շալ կուղեմ, ջան վիճակ...

Աղապ լաճեր լալ կուղեմ, ջան վիճակ...

Վիճա՛կ, արե քյե աանեմ, ջան վիճակ...

Տոնսե-աանիս քյե խանեմ, ջան վիճակ...

Աղապ լաճեր ախ անեն, ջան վիճակ...

Վիճա՛կ, անունըա Մանուշակ, ջան վիճակ...

Տայտ փոռուկ կութնի դոշակ, ջան վիճակ...

Աղապ լաճեր քյե մշակ, ջան վիճակ...

Վիճա՛կ, քյու լեղուն բլբուլ, ջան վիճակ...

Նման ես սարի սմբուկ, ջան վիճակ...

Աղապ լաճեր կյան քյե կուլ, ջան վիճակ...

Մոտակայքում թոքնված աղապ տղաները, հանկարծակի դուրս գալով թաքստոցից, վիճակը փախցնելու փորձեր էին անում: Վրիպելիս ավելի էին ենթարկվում ծաղրանքի, հաջողության հոսանքիս, կաջառքի խոսատմներ ստանալով, վիճակն անվնաս վերադարձնում էին տերերին (ըստ որում, սա էլ սովորություն էր ե կատակից այն կողմ չէր անցնում):

Ասպարածնից վերադառնալով քանդում էին վիճակը: Չորսից հինգ ասարեկան աղջիկների իմացականությունը փորձում էին, ե այն փոքրիկը, որ դեռ ճշգրիտ չդիտեր թե արեը որ կողմից է ծագում, հարսիկ էր ընտրվում: Նրա դուխը ծածկում էին քողով ու վիճակը հանող այս հարսիկին սովորեցնում էին, թե ամեն անգամ, երբ ասում են՝ «Խարս, խան վիճակն պյարի, խամբարցում քյու դիլաք կաարի», նա պետք է ձեռքը մացնի սեռիկի մեջ ու մի որևէ իր դուրս բերի:

Այս անգամ արդեն սկսվում էին վիճակահանման չափածո կարճ սուացվածքները.

Օրինակ՝ Տիքրիս խասավ կյեա Մուրադին,
Տյու էլ խասար քյու մուրտդին,
Խարս, խան վիճակն պյարի,
Խամբարցում քյու դիլաք կաարի:

Հարսիկը դուրս էր բերում մի իր: Մուրադին հասած աերը ուրախանում էր: Հաջորդ ասացվածքը հաջող չէր լինում, օրինակ՝

Քյու խոր, քյու մոր ինչ մեղ արրած,
Քյու ճայտի կյիրն էա էր կյրված,
Խարս, խան վիճակն պյարի,
Խամբարցում քյու դիլաք կատարի:

Անհաջող ասացվածքից իրի տերը տխրում էր, և այսպես շարունակվում էր մինչև «աջխարհի շարն ու բարին չիմացող» քողածածկ հարսիկը

«Դիւանակի փորձից» դուրս է բերում ամենավերջին իւրիւր Վերջանում 10 Համարարձման տոնակատարութիւնները Սեփակի ցուրը թափում էին կտուրը. սր յիշխարավերս:

Համարարձման տոնի հետ կապված էին նաեւ մի շարք կախարհելու ծեսեր, որոնք 1896 թ. Լոստորածնէրից առաջ արեւ էին նախապաշարված, ունոտիապաշտ կանայք, ինչպես, օրինակ՝ պիշերով ավելին հեծնել ու իրենց սաւն շուրջը լոթ աւնդամ պտույտ դալ, սակայն կոտորածն ընդմիջալ ջնջել էր այդ սովորութիւնը և դա արդէն ձիծաղակի հուշերի շարքն էր անցել:

Վարժարան (Վարդապետ): Այս տոնը Արեւակում նշվում էր միմյանց վրա ջուր շարժելով: Զուր էին նկատում առանց հաշիւի տոնելու դիմացինի տարիքն ու հասարակական դիրքը: Զուր էր շարժում շատական հարսը կեսաւայրի վրա, իսկ կանքում բաւարի ներկայութիւնից փախչող սանամերը, Լեւն հաջողացներ բավորի վրա իր թուրստոցից ջուր շարժել, կաններ առանց երկմակում:

Վարժարանի այդ կիրակին նույնպէս արճատիցիններն տնցկացնում էին իրենց ավերակ Ասպարածնի ծառերի տակ, այնտեղ Լիւկով մի-մի հալի մատաղները:

Սրիկ Նյուրք (սուրբ Կեդր): Սկսած Վարդապետի տոնից մինչեւ սուրբ Գեորգի տոնը, ներառյալ Աստուածածնա ու Սուրբ խաչի տոնը, տոհասարակ պայպապոց աշխատանքային ամենաԼատուն ժամանակաշրջանն էր: Այդ ժամանակամիջոցի համար էր հորինվել «Լիւկանի մեռել պիտի խաւնեն, պանդոցեն» փոխարեքական տասուցածքը: Սյնինչ, ս. Գեորգի տոնից հետո իշխում էր սրդին «պոխապիկը կալից Լիւկով տուն» փոխարեքականը: Նշված տոնից հետո հիմք էր դրվում սրոշ չափով խապալ կենցաղին:

Ս. Գեորգի հնգօրյա պատիզ հետո, շարաթ օրը, թեւ տմանց համար դեռ «յախաւվելը կալից չէր Լիւկ տուն», այսինքն՝ կալիի աշխատանքները դեռ ամբողջովին չէին ավարտվել, այնուամենայնիւ, մնացած շնչին պործը երբեք էլ հիմք չէր ծառայում, սր նման ընտանիքների երիտասարդ տնդամները շմտանակցին Վան-Տոսոլ պաւաթի ո. Գեորգի վանքի համաժողովրդական տոնին:

Մարտի օրվա կեսօրից սկսվում էր ուխտադնոցութեան պատրաստութիւնը: Ուխտադնոցութեան մասնակցում էին ընակչութեան տասնչորստասնհինգ տարեկանից մինչեւ աւարիքն առած երկու տնդամները: Ս. Գեորգի վանքը դնում էին արճակցի ու իստակոնիցի ուխտադնաց-

ներ՝ միասին, յուրաքանչյուր դուռն իր ղեկավարով, նաղարա-դուռնայով: Ս. Գեորգ հասնելուն պես, վանքի կառավարիչներն այդ երկու դուռերին առանձին-առանձին սենյակներ էին հատկացնում:

Ս. Գեորգի ուխտադնոցութեան երթը սկսվում էր երեկոյան: Տեղ էին հասնում արեւածագից առաջ: Արեւակցիներն սպասում էին սինչե խառակոնիցիները հասնելին Արեւակի ներքեր, իրենք ևս դուռից դուրս էին դալիս, միանում ու մեկտեղ ուղեւորվում: Ուխտադնոցութիւնը մեծ մասամբ լինում էր հետիոտն, բացառութեամբ ձի ունեցողներին: Ուխտադնացիների հետ էին լինում և մի քանի փասինասալ կոշվող թեթեւաշարժ սայակներ, որոնց վրա բարձվում էին ուխտավորների ուտելիքի պաշար: Կապոցները, երկու դուռի սակավաթիւ ձիատերերն էլ իրենց ձիերը տրամադրում էին ծանոթ-բարեկամների հասուն աղջիկներին, իսկ իրենք իրենց ձիերը նստում էին, իւր տեղ էին հասնում:

Ս. Գեորգի ուխտադնոցութիւնը տեւում էր երեք օր: Այդ նույն շարաթ երեկոյան, երբ ուխտավորները պատրաստվում էին ճանապարհնկենելու, տանը սկսվում էր հաւթսու ղեկել պործողութիւնը: Հավով հարիսա, թե մսով կորկոտ, արճակցիների ձմեռային կերակրացանկում միշտ էլ կարեւոր տեղ էր դրվում, սակայն ս. Գեորգի տոնը պետք է նշվեր հավով հարիսա Լիւկով: Հարիսա էին դնում բոլորն անխտիր: Ամենասակավանդամ ընտանիքը պետք է զներ երկու հավով հարիսա, իսկ բաղմանդամների տներում այդ օրը մորթվում էր ութից տասը հավ: Այս հարիսային նաեւ կալի կոշկոտ էին ասում:

Տիրամոր ուխտադնոցութիւնը: Աստուածածնա առնը ամենուրեք նշվում էր նույն օրը: Ասպարածին վանք ունեցող արճակցի պարզ է, որ Աստուածածնա առնի օրը չէր դնա մի այլ տեղի Աստուածածնա վանքի ուխտին:

Գարավոր հարեանութեամբ և հաղար ու մի աղակցական թելերով արճակցիներին կապված հառակոնիս դուռը ևս Աստուածածնա տոնին Արեւակի Ասպարածնից չէր բացակայում: Հենց այդ պատճառով էլ այդ երկու դուռի ընակչութեան պատկանական սովորութիւն էր տմեն տարի աշնանը, այն է՝ ս. Գեորգի տոնից հետո, միասին ուխտի գնալ Թիմարի պաւաթի հոշակավոր Տիրամոր վանքը: Այդ վանքը բոլոր ընակավայրերից աղետեղ պնացած բոլորտների գլխավոր ասպատանն էր: Տիրամոր վանքն ստացել էր մի քանի

պատվանուն, օրինակ՝ Զառանգ-ճեֆիմ (թարախա-
բուժ րժիշկ), կանաչ շամբառ (իբր քրիստոսի մոռ
գլխաշորն էր վանքի հիմքի տակ թաղված),
Բալաֆյ ֆյամբեթ (գմբեթը տարրեր գույնի քարե-
րից էր կառուցված): Իսկ քրդերն ու թուրքերն
այդ վանքն անվանում էին դերա բալաֆյ:

Տիրամոր վանք ուխտ գնալու կանոնները
նույնն էին, ինչ ս. Գևորգիներ: Սակայն այս վան-
քն ավելի հեռու էր և ոչ թե Վանի կողմն էր
ընկնում, այլ Բերկրիի, ուստի խառակոնիացիներն
էին իրենց գյուղում սպասում արձակցիներին,
ու ապա շարունակում ճանապարհը: Եթե ս. Գե-
վորգի առնն ուրախ երգ ու պարերի, գանազան
զվարճությունների ականատես լինելու բաղամա-
բոխ մի տոն էր Վանի նահանգի բոլոր ընակիչ-
ների համար, ապա Տիրամոր ուխտագնացու-

թյունը աշխատանքից թեթևացած այս երկու
գյուղերի ընակիչների համար շրջագայության
ընույթ էր կրում:

Նրանք գյուղից գուրս էին գալիս ուրբաթ
օրվա կեսօրին, գիշերում էին գավառի վերջին
գյուղում՝ Հաջիշատում ու շաբաթ օրը մայրա-
մուտին հասնում վանք: Կիրակի առավոտյան
տեղում դնում էին մատաղացունքը, եփում,
պատարագ անել տալիս և մայրամուտին, գուրս
գալով Տիրամոր կոչված գյուղից, ամբողջ հինգ
օր, օրը մի գյուղ շրջում: Այցելում էին Թիմարի՝
Գործոթ, էրերին, Կյոսենց և Համկուրեքզ հայ-
կական գյուղերը, իրենց հետ բերած ձավարն ու
չոր փոխինգը գյուղացիների հետ փոխում ծիրանի
չբով ու ընկույզով և յոթերորդ օրը կեսօրին տուն
վերագառնում:

Ժ Ա Մ Ա Ն Ց

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ճըվի-ճըվի: (Փոքրահասակ մանուկների ա-
ռաչին խաղերից): Մանուկները նստած անդր
մեկը մյուսի ձեռքերի երեսի մաշկից բռնում էին.
և մի քանի մանկական ձեռքեր իրարից բռնած,
բարձրանում-իջնում էին, ու երեխաները միաժա-
մանակ երգում էին.

Ճըվի-ճըվի,
Ակլա ճըվի,
Աղեն կյնաց
Երուսաղեմ,
Պուրթ ի պիրե,
Պամրակ չիպե,
Շալ արաց,
Շըլվար չարաց,
Ուրն արաց,
Հաճուն չարաց:
Թո՛ւռ, ճուճուղի՛կ...

Վերջին ճուճուղիկ (ճնճղուկ) կանչի հետ
բոլորն էլ ձեռքերը բաց էին թողնում ու նայում
վեր:

Դրբամփեճա: Մանուկները նստած ձեռքերը
բռնոցք արած, ընթ մատը վերե ցցելով, մյուսի
բռնոցքի մեջ տեղագրելով, կաղմում էին իրար
միացած բռնոցքների շարք և բարձրացնելով ու
իջեցնելով, երգում էին.

Օմ-փինա,
Դրբամփինա,

Ճոչն իլե
Օմփի բաշի,
Պստիկն իլե
Չլաշ գաշի,
Աղեն կասի՝
Վիրին քաշի:

Վերջին խոսքի վրա վերեի ձեռքը շղթայից
անջալալում էր, իսկ մնացածները շարունակում
էին նույն երգը, նույն համաչափությամբ՝ վեր
ու վար անելով ձեռքերը: Ասկայն այս անգամ
ասվում էր՝ «Աղեն կասի արկին քաշի» և
ամենաներքեի ձեռքն էր պոկվում ընդհանուրից,
Այսպես, մինչև բոլոր ձեռքերն էլ «աղայի» հրա-
մանով հեռացվում էին. ամենավերջին ձեռքը
ստանում էր «Օմփի բաշի» պատիվը:

Կլըգրի կըլգաճ պալաբե: Երեխաներից մեկն
իր ղույգ ձեռքերի չոած մատների ծայրերը միաց-
նում էր իրար, ու ստացվում էր չորս բացվածք:

Մյուսը սկսում էր բաղարձի խմոր հուն-
ցելու արարողությունը, ընդ որում, ծիծաղելի
կերպով՝ մերթ քթից ծորացող ջուրը ենթադրյալ
խմորի մեջ խառնելու շարժումներ, մերթ թեա-
տակի կամ գլխի մաղերի մեջ վաղվազող ոջիլները
բռնելու ու խմորի մեջ գցելու ձեռք անելով, վեր-
ջապես ավարտում էր «խմոր հունցելը» և մոտե-
նում նստածին ու «խմորը» ձեռքով նրա բաց
մասների (սկզբում ճկույթի) արանքը մտցնելով,
հարցնում՝